# Թեստ 1

1. Հինգ հազար յոթանասունվեց թվի գրության մեջ ո՞ր կարգում է գրված 0:
   1) միավորների 2) տասնավորների 3)հարյուրավորների
   4) հազարավորների 5) ոչ մի կարգում:
2. Նշիր ամենամեծ եռանիշ թիվը, որի գրության մեջ կրկնվող թվանշաններ չկան
   1) 999 2) 199 3) 789 4) 987 5) 989
3. Գումարելիներից մեկը մեծացրել են 5-ով, իսկ մյուսը մեծացրել են 7-ով: Արդյունքում գումարը
   1) կմեծանա 2-ով 2) կփոքրանա 2-ով 3) կմեծանա 12-ով
   4) կփոքրանա 12-ով 5) կմնա նույնը:
4. Մենք օրվա ընթացքում ուտում ենք 3 անգամ: Քանի՞ անգամ ենք ուտում շաբաթվա ընթացքում:
   1) 7 2) 18 3) 21 4) 28 4) 37:
5. 4075 > 40*5 գրության մեջ «*» -ի փոխարեն ամենամեծը ի՞նչ թվանշան կարող ենք գրել, որ անհավասարությունը ճիշտ լինի:
   1) 8 2) 0 3) 5 4) 4 5) 6
6. 48-թվի $\frac{5}{8}$ մասը կլինի
   1) 6 2) 24 3) 30 4) 20 5) 40:
7. $\frac{3}{5}$ ժամը րոպեներով արտահայտած կլինի
   1) 12 2) 50 3) 24 4) 60 5) 36:
8. 2տ 50 կգ-ը կիլոգրամներով արտահայտած կլինի
   1) 2500 2) 2005 3) 2055 4) 2050 5) 2000:
9. 44սմ պարագիծ ունեցող քառակուսու կողմի երկարությունը կլինի
   1) 10 2) 22 3) 11 4) 5 5) 12:
10. Գծագրում ներկված է պատկերի
   1) $\frac{5}{9}$ մար 2) $\frac{4}{9}$ մասը 3) $\frac{4}{5}$ մասը
   4) $\frac{4}{10}$ մասը 5) $\frac{4}{12}$ մասը:



11. Հաշվիր ամենամեծ եռանիշ և ամենամեծ երկնիշ թվերի տարբերությունը:
   999-99=900
12. Թվային հաջորդականությունը կազմված է հետևյալ կանոնով. առաջին անդամը 3 է, երկրորդ անդամից սկսած յուրաքանչյուր անդամը հավասար է իր նախորդի կրկնապատիկից հանած 1: Գրեք այդ հաջորդականության չորրորդ անդամը:
   3, 5, 9, 17

24-ի և 7-ի արտադրյալից հանիր 98-ի և 2-ի քանորդը:

24*7 – 98:2=168 – 49=119

13.

AB հատվածի երկարությունը 27 սմ
է, AC հատվածը՝ 8 սմ 4 մմ:




Գտիր CB հատվածի երկարությունը:

27սմ-8 սմ 4 մմ=18 սմ 6 մմ

14. Քանի՞ երկնիշ թիվ կա, որի տասնավորը մեծ է միավորից:

10՝1

20, 21՝ 2

30,31,32՝ 3

40, 41, 42, 43՝4

50, 51, 52, 53, 54՝5

60, 61, 62, 63, 64, 65,՝6

70, 71, 72, 73, 74, 75, 76,՝7

80, 81, 82, 83, 84, 85, 86, 87,՝8

90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98,՝9

1+2+3+4+5+6+7+8+9=45

15. Ուղղանկյան մի կողմը 24սմ է, իսկ մյուս կողմը այդ կողմի կեսին է հավասար: Գտիր այդ ուղղանկյան պարագիծը:

24:2=12 2*(24+12)=72 սմ

16. Մեկ սպիտակ և մեկ սև խոզերի զանգվածը միասին 320 կիլոգրամ է: Սև խոզը 32 կիլոգրամով ծանր է սպիտակ խոզից: Ինչքա՞ն է կշռում սպիտակ խոզը:

(320-32):2=144